Հավելված N 414
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.8-Մ2-9):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է հավատարմագրման ոլորտի քաղաքականության մշակման հետ կապված աշխատանքները.
2. իրականացնում է ԵԱՏՄ, ԱՊՀ և այլ շրջանակներում ոլորտային համաձայնագրերի և պայմանագրերի վավերացման և ոլորտային կառույցների հետ հուշագրերի կնքմանն ուղղված աշխատանքները.
3. իրականացնում է հավատարմագրման ոլորտի քաղաքականության մշակման գործընթացում Նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կառույցների հետ համագործակցության աշխատանքները.
4. իրականացնում է հավատարմագրման ազգային մարմնի գործունեության մշտադիտարկման աշխատանքները.
5. իրականացնում է Հայաստանի Հանրապետության և ԵԱՏՄ, ԵՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերով (դրանց առկայության դեպքում) նախատեսված որակի ենթակառուցվածքի համակարգի ոլորտներում օրենսդրությունների մեջ առկա հակասությունների բացահայտման աշխատանքները.

6. իրականացնում է հավատարմագրման ոլորտում միջազգային համագործակցության աշխատանքների կազմակերպման հետ կապված աշխատանքներ՝ նպաստելով ոլորտային համատեղ զարգացման ծրագրերի ձևավորմանը.

7. իրականացնում է ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով հավատարմագրման ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

8. իրականացնում է պետության կողմից կանոնակարգվող ոլորտներում համապատասխանության գնահատման, մարմինների նշանակման գործընթացի կազմակերպման, նախարարության պաշտոնական կայքում նշանակված համապատասխանության գնահատման մարմինների ցանկի հրապարակման, ցանկի շարունակական արդիականացման, համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի վարման աշխատանքները.

9. իրականացնում է համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հետ կապված գործընթացի կազմակերպման, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման գրանցամատյանի վարման աշխատանքները.

10. մասնակցում է արտադրանքի անվտանգությանը, դրա նկատմամբ վերահսկողական գործառույթներին և սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող քաղաքականության մշակման աշխատանքներին.

11. իրականացնում է համապատասխանության գնահատման մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային տեղեկատվության հավաքագրման, ամփոփման աշխատանքները.

12. իրականացնում է հավատարմագրման ոլորտում Նախարարության ենթակայությամբ գործող մարմնի կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունների հավաքագրման և ամփոփման աշխատանքները.

13. իրականացնում է տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC,IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքման և հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված աշխատանքները.

14. իրականացնում է ՀՀ-ում հավատարմագրման գործընթացի էլեկտրոնային համակարգի հետ կապված աշխատանքները.

15. իրականացնում է համապատասխանության գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվող լաբորատոր փորձարկումների հասանելիության և մատչելիության բարձրացմանը, հիմնական արտահանման շուկաներում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ճանաչելիությանն ուղղված աշխատանքները.

16. իրականացնում է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման համար սահմանված ժամկետում հավատարմագրման մասով պայմանագրերի մշակման և հաստատման, ազգային մարմնի կողմից հաշվետվությունների ընդունման աշխատանքները.

17. իրականացնում է Համաշխարհային բանկի վարկային ծրագրի, ԵՄ (CEPA, OIML, PTB) շրջանակներում սահմանված բաղադրիչների մասով միջոցառումների իրականացման աշխատանքները.

18. իրականացնում է ստանդարտների ամենամյա ծրագրի մշակման և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատման ներկայացման աշխատանքները.

19. մասնակցում է ստանդարտացման, չափագիտության ոլորտների պետական քաղաքականության մշակման աշխատանքներին.

20. մասնակցում է չափագիտության և ստանդարտացման ազգային մարմինների գործունեության համակարգման աշխատանքներին.

21. մասնակցում է ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով ստանդարտացման և չափումների միասնականության ապահովման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.

22. մասնակցում է արտադրանքի ցուցանիշների չափումների (փորձարկումների) ճշգրիտ արդյունքներ ապահովող էտալոնային (արբիտրաժային կամ ռեֆերենսային) լաբորատորիաների ճանաչմանն ուղղված աշխատանքներին.

23. մասնակցում է ստանդարտացման և չափումների միասնականության ապահովման ոլորտներում Նախարարության ենթակայությամբ գործող մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունների հավաքագրման և ամփոփման աշխատանքներին.

24. մասնակցում է ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծմանն ուղղված աշխատանքներին.

25. մասնակցում է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման համար սահմանված ժամկետում ստանդարտների մշակման մասով պայմանագրերի մշակման և հաստատման, ազգային մարմնի կողմից հաշվետվությունների ընդունման աշխատանքներին:

Իրավունքները՝

- հրավիրել մասնագիտական քննարկումներ ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բնագավառների պետական քաղաքականության իրականացման օրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներն իրականացնելու նպատակով.
- համապատասխան ոլորտները կանոնակարգող համապատասխան շահագրգիռ մարմիններից, չափագիտության, ստանդարտացման և հավատարմագրման ազգային մարմիններից, միջազգային տարբեր կառույցներից կատարել հարցումներ ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովման և գոյություն ունեցող համակարգի բարեփոխման աշխատանքների իրականացման համար.
- տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, պետական կառավարման մարմինների, միջազգային և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչների հետ կազմակերպել ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման, ոլորտներին առնչվող քննարկումներ, տեսակոնֆերանսներ.

• համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ տեղեկատվություն ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի, գրությունների, առաջարկությունների, եզրակացությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, ուղեցույցերի և այլ փաստաթղթերի նախապատրաստման համար և ուսումնասիրել դրանք.

• մասնակցել ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտներին առնչվող այլ մարմիններում կազմակերպվող նիստերին և խորհրդակցություններին:

Պարտականությունները՝

• կազմել եզրակացություններ ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների միջազգային համակարգերին ինտեգրման աշխատանքների վերաբերյալ.

• ուսումնասիրել ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտներում միջազգային կառույցներից, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից ստացված անհրաժեշտ փաստաթղթեր՝ վերջիններիս հետ համագործակցության խորացման ու համատեղ զարգացման ծրագրերի ձևավորման նպատակով.

• ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին անդամակցելու արդյունքում առաջացող տեխնիկական խոչընդոտները, բացահայտել առկա տարբերությունները և ներկայացնել առաջարկություններ.

• ներկայացնել Բաժնի ոլորտներին առնչվող գործառույթների վերաբերյալ մասնագիտական պարզաբանումներ, վերլուծություններ, եզրակացություններ, առաջարկություններ.

• նախապատրաստել եզրակացություններ որակական և քանակական վերլուծությունների հիման վրա .

• նախապատրաստել ոլորտային միջնաժամկետ ծախսային ծրագրեր և բյուջետային հայտեր.

• մշակել և նախապատրաստել ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտներին առնչվող միջազգային համագործակցության շրջանակներում համապատասխան իրավական ակտերի նախագծեր.

• ուսումնասիրել ոլորտի օրենսդրությունները, համադրել ՀՀ գործող իրավական կարգավորումների հետ, բացահայտել առկա տարբերությունները և առաջադրել հնարավոր լուծումներ.

• ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության նախարարությունների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակվող, համապատասխան ոլորտներին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

• տրամադրել պարզաբանումներ և տեղեկատվություն ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող՝ ստանդարտացման, հավատարմագրման և չափումների միասնականության ապահովման ոլորտներում գործող իրավական ակտերի վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ նշված ոլորտներում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով.

• կազմել հաշվետվություններ ստանդարտների մշակման պետական ամենամյա ծրագրով սահմանված ստանդարտների մշակման գործընթացի վերաբերյալ.

• ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին անդամակցելու արդյունքում առաջացող տեխնիկական խոչընդոտները, բացահայտել առկա տարբերությունները և ներկայացնել առաջարկություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: